ՀՏԴ 325 /479.243/
Քաղաքականություն

Արվարդ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
բ.գ.թ., ԱրՊՀ Փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս

# ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Պետականազուրկ ժողովրդի կյանքում ամեն ինչ փոխվում է: Նա կորցնում է իր ազգային հիմնարար արժեքները և ձեռք բերում թերարժեքության բարդույթ, որի դրսևորման նկատելի ձևերն են՝ ազգային բնավորության ավանդական ձևերի մոռացումը, զոհի բարդույթը, ազգային հպարտության կորուստը, անմիաբանությունը, պարտվողականությունը, ստրուկի հոգեբանությունը և այլն:*
*Լեռնային Ղարաբաղի տարածքում հայ հասարակական քաղաքական կյանքը սկզբնավորվել է նախապատմական հեռուներում և անցնելով շրջադարձային բազում փուլեր՝ տեղական մանր թագավորությունների կարգավիճակով պահպանել է իր ոգեղենությունը և ծնունդ տվել հայ ժողովրդի՝ 20-րդ դարի մեծագույն ձեռքբերմանը՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետության ստեղծմանը:*
***Բանալի բառեր՝*** *Ղարաբաղի մելիքներ, մելիքություններ, ինքնիշխանություն, ազգային-ազատագրական շարժում, պայքար, քաղաքական կողմնորոշում*

***А. Абрамян***

## *ИСТОРИЧЕСКОЕ МЕСТО КАРАБАХСКИХ МЕЛИКСТВ В СОХРАНЕНИИ ПРЕЕМСТВЕННОСТИ ПОЛИТИЧЕСКОЙ ЗРЕЛОСТИ АРМЯНСКОГО НАРОДА*

*В жизнедеятельности нации без государственности с течением времени все меняается. Она теряет свои национальные фундаментальные ценности, и как правило, возникают негативные проявления традиционнвх форм национального характера: сложность восприятия жертвы, утрата национальной гордости и единства, пораженчество, рабская психология и так далее.*
*Общественно-политическая жизнь в Нагорном Карабахе носила доисторический характер и прошла через многие этапы превращения в небольшие царства с сохранением его национального духа и проявления величайщего достижения*

*армян в 20-ом веке – создание Нагорно-Карабахской республики.*
***Ключевые слова**: Карабахские мелики, меликства, суверенитет, национально – освободительное движение, борьба, политическая ориентация.*

***A.Abrahamyan***

## *THE HISTORICAL PLACE OF THE KARABAKH MELIKS MAINTAINING THE CONTINUITY OF THE ARMENIAN PEOPLE'S POLITICAL MATURITY*

*Everything is changing in the life stateless nation. It loses it's national fundamental values and as a rule it going negative displays of traditional forms of national character such as: perceptional complexity of a victim, the loss of national proud and unity, defeatism, slave psychology, etc.*
*Socio-political life of Nagorno – Karabakh had a prehistoric character. It changed into little kingdoms passing through many stages, but saving it's national spirit and manifesting the greatest achievements of Armenions in the 20-th century, that is the formation of the Republic of Nagorno – Karabakh.*
***Keywords**: Karabakh meliks, Meliks, sovereignty, national liberation movement, struggle, political orientation*

Օրինական է, երբ պետականության կորստից հետո, պետականազուրկ ժողովրդի կյանքում ամեն ինչ փոխվում է: Անցյալի փառահեղությունների ավերակների վրա սփռվում է համազգային հուսահատությունը: Ժողովուրդը կորցնում է իր ազգային հիմնարար արժեքները և ձեռք բերում թերարժեքության բարդույթ, որի դրսևորման նկատելի ձևերն են՝ ազգային բնավորության ավանդական ձևերի մոռացումը, զոհի բարդույթը, ազգային հպարտության կորուստը, անմիաբանությունը, պարտվողականությունը, ստրուկի հոգեբանությունը և այլն:

Ահա նման հոգեբանական մթնոլորտում են 18-րդ դարի հայ հասարակական քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչները՝ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Ծահամիր Ծահամիրյանը և մյուսները, Լեռնային Ղարաբաղի ինքնիշխան մելիքությունները ընկալել իբրև ազգային ազատագրական պայքարի հուսալի հենակետ և ինքնիշխանություն ձեռք բերելու կենսական ուժ:

Հայտնի է, որ 1762-67 թթ. Հովսեփ Էմինը և իր ազգական, ծնունդով ղարաբաղցի Մովսես Բաղրամյանը շրջագայում են Թուրքիայում և Պարսկաստանում, լինում Կովկասում, արևելյան և արևմտյան Հայաստանում և որպես ականատես՝ արժեքավոր տեղեկություններ հաղորդում տարբեր հատվածներում ու տարբեր կարգավիճակներում ապրող հայության կյանքի ու հոգևոր նկարագրի մասին: Նրանց հաղորդած տեղեկություններից որոշակի պատկերացում ենք կազմում պետականազուրկ հատվածի հայության սոսկալի ծանր վիճակի ու ընկճվածության և համեմատաբար ինքնիշխանություն ունեցող լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության մեջ առկա նկատելի

ոգեղենության մասին: Ծանր վիճակում գտնվող ժողովրդին ոգեկոչելու համար մեծ հրապարակախոս Մ. Բաղրամյանը իր դարագլուխ կազմող աշխատության[1] հինգերորդ գլխում, որը կրում է «Բացատրություն մեր նախնիների, թագավորների և իշխանների մասին՝ սկզբից մինչև մեր թագավորության իսպառ վերացումը» խորագիրը, շարադրում է հայոց պետականության պատմությունը Նոյ Նահապետից մինչև Խամսայի մելիքությունները, ցույց տալու համար, որ, թեև հայ ժողովուրդը ներկայումս գտնվում է ծանրագույն վիճակում, բայց Արշակունիների, Բագրատունիների, Ռուբինյանների պատմաշրջաններում ունեցել ենք ինքնիշխան նշանավոր պետություններ և պետահիրավական տեսակետից ներկայացել ենք այնպիսի մակարդակներով, որոնք համեմատելի էին աշխարհի՝ իր ժամանակի հանրահայտ պետությունների հետ և որ հայ ժողովուրդը պետականակիր ու տիտղոսակիր է եղել դարեր շարունակ ու կարող է վերստին, հենվելով Ղարաբաղի մելիքության վրա, ազգային-ազատագրական պայքարի դրոշ բարձրացնել, հասնել հաղթանակի և ստեղծել համազգային պետություն: Որպես հայոց ինքնիշխան պետության բնական շարունակություն և առկա կարևոր իրողություն, տաղանդավոր հրապարակախոսը ներկայացնում է Ղարաբաղի մելիքների համառոտ կացությունը: «Արդ՝ Արցախ նահանգի իշխանները հետևյալներն են,- գրում է Բաղրամյանը,- Առաջինն էր Մելիք Ադամը…, ինքնագլուխ իշխան է, այնպես, որ կարող է իրեն ենթակա ժողովրդի միջից հանցավորներին… ինքնակամ կերպով պատժել ու սպանել՝ առանց որևէ մեկի հրամանի:

Երկրորդը կոչվում էր մելիք Հովսեփ: Սա նույնպես ինքնագլուխ է /ինքնիշխան/, իր իշխանության մեջ ինչ էլ ցանկանա, կարող է կատարել՝ առանց ուրիշի հետ հաշվի նստելու…:

Երրորդը կոչվում է մելիք Եսայի, սակայն վերոհիշյալների պես անկախություն չունի, այլ ենթարկվում է պարսից տիրապետությանը:

Չորրորդը կոչվում է մելիք Շահնազար…: Սա ևս պարսից իշխանությանն է ենթարկվում:

Հինգերորդը կոչվում է մելիք Միրզախան…: Սա նույնպես հարկատու է պարսից իշխանությանը»[2]:

Ներկայացնելով Ղարաբաղի հինգ մելիքությունների համառոտ պատմությունը՝ Բաղրամյանի այս նշանավոր երկը մի կողմից դառնում է ժամանակակցի ու ականատեսի ներկայացրած հավաստի պատմություն, մյուս կողմից՝ ինքնիշխանության հասնելու ոգեշնչող գաղափար: Ընթերցողը այստեղ ծանոթանում է Լեռնային Ղարաբաղի՝ 18-րդ դարի սոցիալ-տնտեսական կյանքի ամենաէական փաստերի հետ, ուշ միջնադարի մղձավանջում՝ թուրք-պարսկական բարբարոս միջավայրում ապրող հայ ժողովրդի ծանր իրավիճակի, ինչպես նաև հայ ժողովրդի պետականության վերջին առկայծումներին, ազգի ազատագրության հույս ներշնչող տրամադրություններին, ինքնիշխան լեռնեցիների հպարտության ու արժանապատվության դրսևորումներին: Բաղրամյանը փորձ է անում ցույց տալ, որ ազգային շարժումը քառասից դեպի կանոնակարգվածություն պահանջում է, որ ազգի սոցիալական բուրգի գագաթին գտնվող մարդկանց խումբը, տվյալ դեպքում Ղարաբաղի մելիքները և առհասարակ

---

[1] *Տե՛ս **Մովսես Բաղրամյան**, Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, Եր., 1991:*

[2] ***Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 103:*

ազնվականությունը պետք է լինեն բանիմաց, նվիրված, զինվորական գործում վարժված, հայրենասեր ու քաջ: Նա պետք է իր գործունեության ոլորտում բարձրագույն չափանիշի կրողը լինի, քաղաքականապես առավել գործունյա սուբյետ, և ընդհանրապես մտավոր կարողություններով օժտված:

Զրաբերդի տեր Մելիք Ադամին /Մելիք Իսրայելյան/ ներկայացնում է որպես խորամիտ և քաղաքավարի մարդու, պատերազմի մեջ՝ խիզախ: Գյուլիստանի տեր Մելիք Հովսեփին /Մելիք-Բեգլարյան/՝ որպես չափազանց քաջ ու արի, որն իր անկախությունը ձեռք է բերել սեփական խիզախության շնորհիվ: Ահա թե ինչու է նա գովում Քրիստոսի այս քաջ զորավարին և խիզախ հերոսամարտիկին, որ պատերազմի մեջ հանապազ արյուն-քրտինք է թափում հանուն Քրիստոսի հավատքի:

Դիզակի տեր Մելիք Եսայուն /Մելիք Եգանյան/, ներկայացնում է որպես գրասեր և ուսման հմուտ մարդու, որը, սակայն վերոհիշյալների պես ինքնիշխան չէ, վարանդայի տեր Մելիք Շահնազարյանին՝ որպես հնարամիտ անձնավորության, հմուտ՝ դիվանագիտական օրենքներին ու ծեսերին, Խաչենի տեր Մելիք Միզախանին՝ որպես համեստ ու խաղաղասեր մարդու[1]:

Այս քաջ ու իմաստուն մելիքները Ղարաբաղում ստեղծել էին հանգիստ ու խաղաղ կյանքի պայմաններ:

«Երկրում այնպիսի ապահովություն էր տիրում,- հետագայում գրում է մեծանուն վիպասան Ռաֆֆին,-որ դեռահաս աղջիկները այգիների ծառերի տակ նստած կար էին կարում, մնում էին այնտեղ, մինչև մութը պատում էր, հարսները զուգված, զարդարված դուրս էին գալիս տներից և աներկյուղ զբոսնում էին լեռների վրա՝ բոլորովին չմտածելով, թե թուրքը կամ պարսիկը կգա, կհափշտակե և կտանե նրանց: Երբ թշնամին հայտնվում էր, երկրի երիտասարդները զենքը ձեռքներում միշտ պատրաստ էին նրան հանդիպելու համար»[2]: Մինչդեռ, Հայաստանի մնացած մասերում տիրում էր համատարած ստրկությունն ու ստրկամտությունը, համատարած հուսալքությունը. «…Խոհեմությամբ ուշք դարձրեք դուք, ո՛վ հայոց երիտասարդներ,- գրում է Բաղրամյանը,- և նայե՛ք մեր հայրերի ու ծերունիների վախկոտությանը, որոնք, կարծես հոժարակամ հաշտվել են, որ իրենց զավակները այլազգիների իշխանությանը ենթարկվեն: Ահա թե ինչու ո՛չ կարողանում են հագնել իրենց սիրած զգեստները, հեծնել ձի ու երիվար,և ո՛չ էլ կարողանում են իրենց դուստրերի ու կանանց գեղեցկությունն ու շքեղությունն ազատորեն ցույց տալ աշխարհին: Չեն թույլատրում նաև, որ պատանիներն ու երիտասարդները երբևէ ի հայտ բերեն իրենց արիությունն ու քաջությունը, որով, թերևս ճանաչման ու հռչակի արժանանալով, նրանց անուններն ազգերի ու սերունդների մեջ հիշվեն, այլ երիտասարդ և պիտանի ժամանակը նեղում են /նրանց՝ պահելով/ մեղավորի պես գլխիկոր և ծառայի պես ձեռքերը ծալած»[3]:

Նման ծանր ու հուսահատական իրավիճակ է ներկայացնում մյուս ականատես գործիչը՝ Հովսեփ Էմինը: Գալով Հայաստան, հյուրընկալվելով Կարինի մոտ գտնվող Ջինիս գյուղում՝ ականատես է լինում նման հուսալքության ու ստրկամտության, իսկ հետո՝ Ղարաբաղում խանդավառվում 40 հայ քաջերի 4000 ավարառուների դեմ մղած ճակատամարտում ձեռք բերած փայլուն հաղթանակով: Էմինը ցավով նշում է,

---

[1] *Տես **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ102-103:*
[2] ***Ռաֆֆի**, Խամսայի մելիքները, երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1987, էջ 450:*
[3] ***Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 163:*

որ Կարինի ժողովուրդը այնքան ընկճված ու հուսահատ էր, որ նույնիսկ ազատության մասին չէր էլ մտածում: Իր համար ստեղծված ծանրագույն վիճակը համարելով բնական՝ ցավ չի զգում անմարդկային կտտանքներից ու տանջանքներից՝ կարծելով թե դրանով հնազանդության աստվածային պատվիրաններն է կատարում: Դեռևս առաջին ուղևորության ժամանակ՝ 1760 թ. ձմռանը, հյուրընկալվելով հայկական Ջինիս գյուղում, նա ականատես է լինում հետևյալ ցավալի իրավիճակին. երբ գյուղի բնակիչները Էմինին տեսնում են ընտիր գորշ ձի հեծած, կարծում են, թե թուրք ժանդարմ է և սկսում են քծնվել նրան: Բայց երբ նա խոսում է հայերեն, շատ են բարկանում, արհամարում և նույնիսկ ցանկանում հարձակվել և բրով ծեծել նրան: Էմինը, այս վարմունքը տեսնելով թուրքերեն լեզվով սպառնում է նրանց…: Թուրքերեն խոսքերը լսելուն պես խեղճ արարածները կրկին սարսափում են և ծունկի գալիս, ամենախոր ակնածանքով առաջնորդում գյուղապետի տաքուկ տուն և հյուրասիրելու համար ոչխար մորթում…: Այնուհետև Էմինը սկսում է շատ մտերմորեն խոսել նրանց հետ. «Դուք քրիստոնյաներդ ինչու՞ կառարկեք, երբ ձեր ազգականներից մեկը քմահաճույք կունենա ռազմիկ դառնալու. և ինչու՞ դուք ազատ չեք: Ինչու՞ դուք ձեր սեփական թագավորը չունեք: Նրանց պատասխանը եղավ «Պարո՛ն, մեր ազատությունը այն աշխարհում է. մեր թագավորը Հիսուս Քրիստոսն է»: Էմինը զայրացած հարցնում է. «Ի՞նչ խոսք է այդ. ո՞վ ասաց ձեզ թե այդպես է.

-Եկեղեցու Սուրբ հայրերը, լինում է պատասխանը - որոնք ասում են թե հայ ազգը մահմեդականներին հպատակ է եղել աշխարհի ստեղծումից ի վեր և այդպես էլ պետք է մնա մինչև հարության օրը»[1]:

Ահա այսպիսին էր պետականազուրկ հայության ընդհանուր մտածելակերպը 18-րդ դարում: Ինչպես տեսանք այլ էր իրավիճակը Լեռնային Ղարաբաղում:

1766 թվականին Ղարաբաղի կացությանը ծանոթանալու նպատակով Գյուլիստանի մելիք Հովսեփի հետ Հովսեփ Էմինը մեկնում է Ղարաբաղ, հանդիպումներ ունենում Գանձասարի կաթողիկոսի, Ղարաբաղի մելիքների և Շուշիի Իբրահիմ Խանի հետ: Գյուլիստանում եղած ժամանակ Էմինը ականատես է լինում հետևյալ տպավորիչ ռազմական գործողություններին.

Գանձակից եկող մի գեղջուկից Մելիք Հովսեփը իմանում է, որ իր դեմ է շարժվում մուսուլմանական մի մեծ զորաբանակ: Այդ պահին Հովսեփը բարեկենդանի տոների առիթով իր 500 զինվորներին ազատ էր արձակել, որպեսզի յուրաքանչյուրը իր ընտանիքի հետ անցկացնի այդ տոնական օրերը: «Զորապետը /Հովսեփը/ 40 մարդուց ավել չուներ այդ պահին, պատմում է իրադարձության ականատես Հ. Էմինը: Իր 40 մարդկանց չորս մասի բաժանեց և հինգը՝ ինքը իրեն որդի Բեգլարի հետ դիրք բռնեցին մի ապառաժի ետևը, այն բլրի վրա, որի կողքերը սփռված է Գետաշեն գյուղը: Երկրորդ խումբը բաղկացած էր 12 հոգուց, իսկ երրորդը 13 հոգուց»:

Մուհամեդ Հասան Խանը արևածագից երկու ժամ առաջ հասցրել էր 2000 ղզլբաշիների, 2000 մահմեդական հետևազորի և գյուղացի 500 հայերի գլուխ անցած գրավել գյուղի վերևում գտնվող ամրոցը: Հազարավոր հրացանների պայթյունների հետ ալլահ-ալլահ աղաղակող մահմեդականներն անցան գրոհի: Այդ պահին զորապետը հրամայեց իր հարյուրապետ Աղա Բեկին որ կրակի:

---

[1] *Տես **Հ. Էմին**, Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, թարգ. Հ. Խաչմանյան, Բեյրութ, 1958, էջ 156:*

«Վեհանձն հայը, փոխանակ իր հրացանն ուղղելու դեպի Պալլահ Մուհամեդը, իր գրպանեն հանեց քթախոտի խոշոր կաշվե տոպրակը…և այն բանալով, ամենայն պաղարյնությամբ, մատուցեց իր տիրոջը և ասաց. «Տեր իմ, անհամբեր մի ըլլաք: Հրամայեցեք: … Եվ իր հրացանը ուղղեց դեպի պարսիկը: Հարվածի հետ միաժամանակ Պալլահ Մուհամեդը անմիջապես դարձուց իր ձին և իր մարմինը դեպի ձախ ծռեց, սակայն և այնպես փամփուշտը հասավ իրեն և գլխիվայր գետին նետեց զայն: Անհամար զորքը, իր հրամանատարի ճակատագիրը տեսնելով ցիրուցան հոտի նման սկսեցին փախչել՝ զենքերը ցած նետելով»[1]:

Ահա այսպիսի անհավասար ու հերոսական պայքարի գնով էին ձեռք բերել արցախցիները այն մեծ հավատն ու վստահությունը, որի հետ մեծ հույսեր էին կապում հայ լուսավորիչները և որի հետ հաշվի էին նստում շրջակայքի մահմեդական իշխանությունները, պարսիկներն ու թուքերը և որի վրա էլ հենվելով՝ ռուսները ծրագրում էին հարավային Կովկասում հաստատել իրենց տիրապետությունը: Պատմական բոլոր աղբյուրները վկայում են, որ Վաչագան Բարեպաշտից սկսած միաբանությունն է եղել Արցախի իշխանավորների ուժի ու հզորության պատվարը: Այդպիսի եզրահանգման հիմնավորումներ են հանդիսանում 1714թ. Գանձասարում Եսայի կաթողիկոսի նախագահությամբ Ղարաբաղի մելիքների ժողովում ընդունված կանոնների համակարգը և նույնանման հավաքների շարունակականությունն ու մելիքների փոխադարձ ուղերձներն ու նամակները: Ուշագրավ է 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղում կատարվող քաղաքական անցուդարձերի ակտիվ մասնակից և պարսկական արքունիքում մելիքական իշխանությունների հավատարմատար Աբրահամ Բեկնազարյանին՝ Ջրաբերդի մելիք Վանու նամակը, որտեղ ասված է. <<Ղարաբաղը կազմում է Աղվանքի մի մասը, և հինգ հարազատ մելիքները Աղվանքի թագավորների հարազատ իշխող սերունդներն են…մեր շահ պապերը որպես բազմադարյա սեփականություն, այդ հողերը տվել են հինգ հարազատ մելիքներին՝ որդուց որդի, տեր և իշխան նշանակելով…Ո՛չ ավազակապետ Ջարչի-Ֆանահն է Ղարաբաղ հող բերել Պարսկաստանի խորքերից, ո՛չ Իբրահիմ ճրռ-խանը՝ Շիրազի բանտերից:[2]

Կարևորելով հայ ժողովրդի ոգեղենության առկա վիճակը՝ ռուսական բանակի գեներալ Պավել Պոտյոմկինը Հովսեփ Արղությանին հարցնում է. «Մեծ Հայաստանի երկիրը, ընկնելով օրենքով անմաքուր թուրքերի և պարսիկների ձեռքը, այնքան երկարատև գերությունից հետո էլ պահում է արդյոք ոգու այնքան ուժ, որ կարևոր է ազատ հոգու համար: Գերությունը և զանազան ճնշումները արդյոք չեն ոչնչացրել սրտերի մեջ ազնիվ զգացմունքները: Բանականության ուժը, օրենքը և հավատի ամրությունը այնքան արդյոք ներգործություն ունեն, որ սրտերի ներքին տրամադրությունը հակված լինի խորտակելու նրանց ճնշող լուծը:…Հավատն ուժեղ կերպով է արդյոք ազդում հայ ժողովրդի վրա և բարեպաշտությունը կարող է ժողովուրդ դրդելու առիթ դառնալ: Կաթողիկոսի աստիճանը ի՞նչ հարկ ունի հայերի մեջ: Մելիքները մատուցանու՞մ են նրա սրբազան աստիճանին պատշաճավոր հարգանք, իսկ ժողովուրդը հնազա՞նդ է մելիքներին. և, վերջապես, ի՞նչ

[1] ***Հ. Էմին****, նշվ. աշխ., էջ 340:*

[2] *Ապրես Բեկնազարյանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ստեփանակերտ, 2018, էջ 260-261*

միջոցներ կան ժողովրդին հաճոյանալու, մելիքների հավատարմությունն ապահովելու և հոգևորականությունը գրավելու համար»[1]:

Թուրք պարսկական անագորույն լծի տակ Լեռնային Ղարաբաղում պահպանված այս հատվածի ինքնիշխանության շնորհիվ պահպանվել էր հայի ոգու ուժը, ազատ ապրելու տենչը, դրան հասնելու արահետներն ու հույսերը և հավատի մաքրությունը:

Ղարաբաղի մելիքները Եկատերինա 2-րդ կայսրուհուն հղած դիմումների մեջ հպարտորեն ներկայանում էին որպես «Հայ Արշակունյաց թագավորական տնից սերված ազնվականների ժառանգներ»[2]:

Ռուսական կողմը, ծանոթանալով Արցախի մելիքների կարգավիճակին և ռազմական ուժերին, ճանաչում է նրանց ինքնիշխանությունը և ծրագրում ազատագրել երկրամասը և ստեղծել Ղարաբաղի ինքնիշխան մարզ: «Սրանից հետո,-նշվում է հղված փաստաթղթում,.- Ղարաբաղը պետք է կազմի՝ բացի ռուսներից ոչ մեկից կախում չունեցող մարզ»[3]:

Եկատերինա 2-րդին ներկայացված զեկուցագրի մեջ իշխան Պոտյոմկինը այն համոզմունքն է հայտնում, որ Ղարաբաղը՝ բաղկացած հայ ժողովրդից, պետք է ազգային կառավարություն ունենա և այդ միջոցով Ասիայում վերականգնվի քրիստոնեական պետությունը՝ համաձայն Զերդ կայսերական մեծության բարձրագույն խոստումների, որոնք իմ միջոցով տրվել են հայ մելիքներին»[4]:

Ահա այսքան հանրահայտ էր Ղարաբաղի մելիքությունների հեղինակությունն ու հոգու կորովը, որի արդյունքում 18 և հաջորդ դարի հայ ազգային-ազատագրական շարժումների ծրագրերի հիմքում նրանց հեղինակները դնում էին ինքնիշխան Ղարաբաղի մեծ հույս ներնչող գործոնը:

*Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ա.Փ.Ենգոյանը:*

---

[1] *Н. Дубровин, «История войн и владычества русских на Кавказе», т. 2, СПБ, 1886, էջք 27-28:*

[2] *Տես Армяно-русские отношения в 18 веке, т. 4, Ер., 1930, էջ 239:*

[3] *Նշվ. աշխ., էջ 239:*

[4] *Նշվ. աշխ., էջ 241:*